ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4564-Ա «17» սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.648-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով քաղաքացի Կարեն Ավագյանի դիմումները (24.03.2026թ. հ.Դ-28908-26, 14.05.2026թ. հ.Դ-49108-26).

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի փետրվարի 9-ի «Ինքնակամ կառույցի օրինականացման մասին» հ.648-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող 54.25քմ (48.77քմ մակերեսով հողամասի համար՝ Կ.Հալաբյան փողոց, հ.26/1, 5.48քմ մակերեսով հողամասի համար՝ Կ.Հալաբյան փողոց, հ.26/2 հասցեները) ընդհանուր մակերեսով հողամասում կառուցված՝ աստիճանահարթակ և ծածկ, գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցները (ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2022ԿԿԵԲ15), համարել Երևան քաղաքի սեփականությունը և այն ճանաչել օրինական (կցվում են հողամասի և շինությունների հատակագծերը)։»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ